



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶԻ

ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2014թ-ի ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին գյուղական
Համայնքի ղեկավարի
2014 թ.-ի տարեկան կատարված աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ, գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու և համայնքի 138 բնակիչների

22-01-2015թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2014թ. տարվա ընթացքում գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2014թ. տարվա ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվում է հացահատիկի բերքահավաքի աշխատանքները:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Ոռոգման ջրի բացակայությունը
2. Հողասեփականատերերի բացակայությունը:
3. Մեխանիզացիայի պակասը
4. Պարարտանյութի և թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը:
5. Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ

պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ռոտզման ցանցի մաքրման աշխատանքները:
2014թ. -ի ընթացքում կատարվել է նաև դաշտամիջյան ճանապարհների և առուների վրա խողովակների ընթացիկ վերանորոգումներ, փոսայցումներ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում, ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի արձանագրվել հիվանդության դեպքեր:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 5 առևտրի օբյեկտ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքաօգտագործման վրա:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:

Մայիս, հունիս ամիսների ընթացքում բարեկարգվել և կանաչապատվել է համայնքի զբոսայգին: Թարմացվել է Հունան Ավետիսյանի կիսանդրին: Տեղադրվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհված համայնքի բնակիչների ցուցանկը:

Սիստեմատիկաբար, շաբաթը 1 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2014թ. տարվա ընթացքում համայնքի բյուջեից 1 000 000 հազար դրամ:

Հուլիս ամսից ընդունվել է համայնքի խմելաջրի նոր ցանցի կառուցման համար ընդունվել է „Լուկաշին գյուղի ջրամատակարարման ցանցի կապիտալ վերանորոգում,

| | |
|---|--------------------|
| նախագիծը, որի իրագործման ծախսը կազմում է 95.900.000 ՀՀ դրամ | |
| ՄԷՋՕ-ի կողմից | 10.748.000 ՀՀ դրամ |
| FPWC՝ | 20.136.000 ՀՀ դրամ |
| Նոր Ակունք՝ | 31.044.000 ՀՀ դրամ |
| Լուկաշին համայնք՝ | 33.972.000 ՀՀ դրամ |

Համայնքն ունի ֆինանսական խնդիրներ ներդրումների մասով, չունի ֆոնդային բյուջեում գումար, ուստի չի կարող հայտարարել մրցույթ՝ գնումների համար: Սակայն ծրագրի իրականացումը մեծ դեր ու նշանակություն ունի համայնքի հետագա զարգացման համար: Խողովակաշարը գտնվում է անմխիթար վիճակում, շատերին ջուր չի հասնում: Թաղամասեր կան, որտեղ ընդհանրապես ջրագիծ գոյություն չունի, մարդիկ իրենց ամբողջ կյանքի ընթացքում ջուրը գնում են:

Ելնելով անհարժեշտությունից, հիմք ընդունելով համայնքի բնակիչների խնդրանքները և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համայնքի ավագանին որոշեց, որ համաձայնություն տա համայնքի աշխատակազմին, կնքվի կապալի պայմանագիր՝ առանց գնումների: Ֆինանսավորումը կատարվի 2 տարվա ընթացքում և անմիջական վերահսկողությունը և պատասխանատվությունը՝ գործի որակի և տեխնիկական հսկողությունը, թողնել համայնքի աշխատակազմին:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՄՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը՝ 272:

Աշխատողների թիվը՝ 38-ը, որից՝ ուսուցիչներ՝ 35:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, ապրիլի 7-ի, մայիսի 9-ի, մայիսի 28-ի, սեպտեմբերի 21-ի և տարեմուտի կապակցությամբ:

Հունան Ավետիսյանի 100 ամյակի կապակցությամբ կազմակերպվեց մեծ միջոցառում: Միջոցառմանը հրավիրված էին Արմավիրի մարզպետը, մարզպետարանի մի շարք աշխատակիցներ, զեներալներ, Արցախյան պատերազմի ազատամարտիկներ, որոնք պարգևատրվեցին Հունան Ավետիսյանի անվան մեդալներով, պատվոգրերով: Միջոցառմանը ներկա էին նաև մի շարք պաշտոնատար անձինք և համայնքի բնակիչները: Միջոցառումն ավարտվեց հյուրասիրությամբ:

Համայնքում ձևավորվել է պարի խմբակ, որը կարճ ժամանակում հասել է մեծ հաջողությունների: Հուլիսի 6-ին Սևան բաղաբում անցկացվելիք փառատոնին մասնակցել է նաև Լուկաշին համայնքի պարի խումբը: Խմբակը մասամբ ֆինանսավորվում է համայնքի բյուջեից:

Մշակույթի տանը տեղակայված է գրադարան, որը ունի 13 696 կտոր գրականություն:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:

Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել գոհված ազատամարտիկների և Հայրենական Մեծ պատերազմում գոհված մասնակիցների հուշարձան համալիրին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը:

Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է առողջապահության ոլորտը:

Աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկների աշխատանքները:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում գոհված ազատամարտիկների և սոցիալ անապահովների ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն, 2014թ, տարվա ընթացքում ընթացքում համայնքի շուրջ 113 սոցիալապես անապահով ընտանիքների 4 500 000 ՀՀ դրամի չափով օգնություն է հատկացվել: Յուրաքանչյուր մահացածի համար ծաղկեպսակ է գնվել, ոմանց ընտանիքներին էլ տրվել է դրամական օգնություն:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 278 թոշակառուներ՝, ծերության և աշխատանքային: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 92: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքի շուրջ 35 բաժանորդներ օգտվում են թվային հեռախոսակապից:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքի տնտեսությունների թիվը՝ 760, առկա բնակչության թիվը 1405 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1169 մարդ:

2014 թվականի ընթացքում համայնքում ծնվել են երեխա 40, մահացածների թիվը՝ 26:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականի ընթացքում հավաքագրվել է եկամուտներ՝

| N | անվանումը | Տարեկան պլան | 2014թ, տարեկան | |
|---|--------------------|-----------------|----------------|---------|
| | | | պլան | տարեկան |
| 1 | Հողի հարկ | 11140.0 | - | 11087.8 |
| 2 | Գույքահարկ | 3910.0 | - | 4063.1 |
| 3 | Տեղական Տուրքեր | 250.0 | - | 150.0 |

| | | | | | |
|---|--|----------|---|---------|-------|
| 4 | Ոչ հարկային Եկամուտներ | 460.0 | - | 465.3 | 101.1 |
| 5 | Պետ. Բյուջեից Տրամադրվող դոտացիա | 29169.1 | - | 29169.1 | 100.0 |
| 6 | ԴԱՀԿ | - | - | - 534.8 | - |
| 7 | Ընդամենը Վարչական բյուջե | 4 4929.1 | - | 44400.5 | 98.9 |
| 8 | Հողի օտարումից Մուտքեր | - | - | 97.6 | - |
| 9 | Վարչականից հատկացում Ֆոնդայինին | 2500.0 | - | 2409.7 | - |
| 9 | Տարեսկզբի ազատ Մնացորդ | 500.3 | - | - | - |
| | Ընդամենը | 47929.4 | - | 44400.5 | 98.9 |

Բերված աղյուսակից երևում է, որ համայնքի բյուջեի եկամուտների զգալի բաժինը պլանավորվել և հավաքագրվելու է 2014 թվականի ընթացքում:
Վարչական բյուջեի գծով տարվա ընթացքում հավաքագրվել է ընդամենը եկամուտների 98.9%-ը, այդ թվում սեփական եկամուտների պլանը կատարվել է 100.0 %-ով:

2014 թվականի ընթացքում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

| N | Ծախսերի անվանումը | 2014թ. տարեկան | | Գատառողական % | |
|----|------------------------------------|----------------|---------|---------------|------|
| | | պլան | փաստացի | | |
| 1 | Տեղական Ինքնակառավարում | 16678.5 | 14400.8 | - | 86.3 |
| 2 | Համայնքի այլ Ծախսեր | 2566.3 | 2094.2 | - | 81.6 |
| 3 | Աղբահանություն | 2250.0 | 1932.0 | - | 85.8 |
| 4 | Մշակույթ ուղ.հեռ. | 2400.0 | 2350.9 | - | 97.9 |
| 5 | Կրթություն | 3200.0 | 3080.1 | - | 96.0 |
| 6 | Սոց. Օգնություն | 4503.4 | 4500.0 | - | 100 |
| 7 | Ջրային տնտեսություն/արտիզաններ/ | 10300.0 | 8826.8 | - | 85.6 |
| 8 | Պահուստային հատկացում ֆոնդի | 2500.0 | - | - | - |
| 9 | Ճանապարհների Վրանորոգում | 3531.2 | 3531.2 | - | 100 |
| 10 | Ֆոնդային բյուջե | - | 2952.0 | - | - |
| | ընդամենը | 45429.4 | 43668.0 | - | 96.1 |

<<Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Լուկաշինի գյուղապետարանում 2014թ. -ի ընթացքում ստացվել է 152 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ: Ընթացիկ ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել են 158 գրություն, հղվել է 93 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է թվով 315 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 14 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 6 որոշում:

2014 թվականի ընթացքում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 11 մարդ, որից 4-ը համայնքային ծառայողներ, 5-ը տեխնիկական աշխատողներ, 1 հայացողական պաշտոն: 9-ը մանկապարտեզի աշխատողներ, 1 գրադարանի աշխատող:

2014 թվականի ընթացքում աշխատավարձի և սոց. վճարումների պարտքեր չկան:

2014 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 8 նիստ՝ 29 որոշումներով, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով, ուժերով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մանկապարտեզի շենքի տանիքի վերանորոգում:
2. Ճանապարհների ասֆալտապատում՝ միջմարզային ճանապարհի Լուկաշին-Արմավիր հատված:
3. Գլխավոր փողոցների լուսավորություն:
4. Զբոսայգու կառուցում:
5. Գյուղտեխնիկայի ձեռք բերում /տրակտոր և գյուղգործիքներ, կոմբայն/:
6. Կուլտուրայի տուն:

ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ. ՄԿՐՏՅԱՆ